

յին Որոզիկես (P. G. XIII. 881, 1570. 1636) և Յերոնիմոս իր Եսայեայ մեկնութեան մէջ (in Js. 10. P. L. XXIV. 33) թէ Եսայիի գերեզմանը Սելովամի մօտ էր. և Յայանաուրֆն ալ կը հաստատէ զայն: Գրիստոնէական հնախօսութիւնն ալ վերջին տարիներու մէջ Սելովամի մերձակայ քարայրներու մէջ գտած է յունարէն արձանագրութիւն մը՝ նուիրուած Եսայի մարգարէին յիշատակին: Ուրեմն ճշգրտութիւն մըն է ցուցակագիր վարդապետին Սելովամի հայկական Նորավանքին տեղագրութիւնը:

Նորավանք անուամբ վանք մը ունեցեր ենք նաև Սիւնեաց աշխարհին Վայոց Ձոր գաւառին Ամաղու գիւղին մօտ, նախ յանուն Ս. Փոկասու եւ յետոյ Ս. Կարապետի եւ Ս. Ստեփանոսի փոքր եկեղեցիով մը, որուն շուրջ շինուած է մեծ վանք մը Նորախանի կոչուած, ուր Օրպելեանց իշխաններուն և եպիսկոպոսներուն տապանատունը եղած է. և ան ընդհատներով տեւած է մինչև ԺՁ. դար: Այս վանքին հիմնարկութեան և վերաշինութեան համար պատմիչ Ստեփանոս Օրպելեան ունի ընդարձակ տողեր, որոնցմէ կը հասկցուի թէ վերև յիշուած եկեղեցիին մէջ շինուած էր գեղեցիկ աւաղան մը այն ջուրէն, որ կը բղխէր սեղանին տակէն, եւ ամէն կողմէն կու գային ախտածէտք եւ բո՛րոտներ լուացուելու և բժշկուելու համար. (Սխալակն, էջ 184-204): Այս պարագան ինձ կը թելագրէ ըսել թէ հին դարերուն Երուսաղէմ եկող Սիւնեաց գաւառի ուխտաւորները Սելովամ այցելած ու անոր ջրերէն օգտուած են և վերագառնալով հայրենիք Նորախանի անունով վանք ու եկեղեցի շինած են ի յիշատակ Սելովամի աւաղանի հայկական Նորավանքին: Պատմութենէն յայտնի է որ ինչպէս տօներն ու ծիսական սովորութիւններն ուխտաւորաց միջոցաւ տարածուած են Երուսաղէմէն դուրս, նոյնպէս Տնօրինական Ս. Տեղերու յիշատակը նոյն միջոցաւ հաստատուած է գաւառաց մէջ:

2. — Խարայ Երաներոյ վանքն, որ և ի Ձորն Յովսափասու, վերձ ի Գեքսեւանի.

Խաղ Կարնեցի եպիսկոպոսը, որ տեղապահն էր Մեծն Ներսէսին, կը յիշեն Բիւզանդ և Խորենացի պատմիչները, թէ ինչպէս Հայոց Արշակ Թագաւորը չտոկաց Խաղին իրաւացի յանգիմանութիւններուն և հրամայեց որ քաջքնն և քարկոծեն նոյն եպիսկոպոսը: Բայց ըստ Խորենացւոյն, Խաղի աղջկան տաղրերն,